ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Սամվել Մուրադյանը ծնվել է 1945 թ. ՀՀ Արագածոտնի մարզի Աղձք գյուղում: Տեղի դպրոցն ավարտելուց հետո՝ 1964-1969 թթ., սովորել-ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետի հայոց

լեզվի և գրականության բաժինը: 1969-ից մշտապես աշխատել է համալսարանում (միայն 2 տարի՝ 1992-1994 թթ., Երուսաղեմի Հայոց պատրիարքարանի հրավերով հայ գրականություն ու Նոր կտակարան է դասավանդել տեղի Ժառանգավորաց վարժարանում և Ընծայարանում):

1984 թ. «Հարություն Սուրխաթյան» աշխատության պաշտպանությամբ ստացել է գիտությունների թեկնածուի աստիճան, ապա և դոցենտի կոչում: 1995 թ. «Երվանդ Օտյան. կյանքը և գործը» աշխատության համար՝ բանասիրական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 2004 թ.՝ պրոֆեսորի կոչում:

Ս. Մուրադյանը 1984 թ. հայ գրականություն և գրական մտքի պատմության հիմնական և մի շարք մասնագիտական հատուկ կամ ընտրական դասընթացներ է վարել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի բակալավրիատի ու մագիստրատուրայի տարբեր կուրսերում: Եղել է հայ դասական, նորագույն գրականության և մամուլի գծով պաշտպանված բազմաթիվ թեկնածուական ու դոկտորական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս, ղեկավարել մի շարք ասպիրանտների և հայցորդների ատենախոսություններ: ԵՊՀ-ում գործող հայ գրականության գծով բանասիրական գիտությունների դոկտորի աստիճան շնորհող 012 մասնագիտական խորհրդի նախագահի տեղակալն է:

2001 թ. ԵՊՀ հայ գրականության ամբիոնի վարիչ է ընտրվել. այժմ ակադեմիկոս Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի վարիչն է: 2001 թ. ՀԳՄ անդամ է:

Հեղինակ է 8 մենագրության ու բազմաթիվ հոդվածների: Մասնակցել է բազմաթիվ միջազգային և հանրապետական գիտաժողովների:

2014 թ. արժանացել է ՀՀ գիտության վաստակավոր գործչի կոչման, պարգևատրվել՝ մի շարք մեդալներով ու պատվոգրերով:

Ամուսնացած է, ունի երեք դուստր և յոթ թոռ:

muradyan.samvel45@gmail.com
Հեռ.՝ 055 52 29 36

ՀՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ
(2014-2018 թթ.)

Գրքեր

Հովհաննես Շիրազ. Թոնդրակեցիները, Երևան, 2014:

Հովհաննես Շիրազ. Բանաստեղծը , մարդը, գիրք Բ., Երևան, 2015:

Հովհաննես Շիրազ. Բանաստեղծը, մարդը, մենագրություն, Գիրք Բ, Երևան, 2016:

Հովհաննես Շիրազ, Հուշարձան հայրիկիս, պոեմ՝ հյուսված բանաստեղծությամբ, Երևան, 2017:

Հովհաննես Շիրազ. Անտիպ էջեր, գիրք Ա, Երևան, 2018:

Հովհաննես Շիրազ. Անտիպ էջեր, գիրք Բ, Երևան, 2019:

Հոդվածներ

Հայրենապաշտության քուրմը (Հովհ. Շիրազի ծննդյան 100-ամյակի առթիվ). – «Վէմ» համահայկական հանդես, 2015, № 2:

Պատում-միջավայր-հերոս հարաբերակցությունը Նար-Դոսի «փոքր» արձակում. – Նար-Դոսի 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, 2017, էջ 273-283:

Ավետիս Ահարոնյանը Հարություն Սուրխաթյանի 1926 թ. կազմած «Հայ գրականություն» դասագրքում. – Ավ. Ահարոնյանի 150-ամյակին նվիրված գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2017:

Եղիշե Չարենց - 120. – «Պատմաբանասիրական հանդես» 2017, № 2, էջ 12-31:

Ինքնակերպավորված Եղիշե Չարենցը «Երկիր Նաիրի» վեպում և Կարսի անկումը նրա հայացքով. – «Չարենցյան ընթերցումներ» գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, պրակ 10, ԵՊՀ հրատ., 2017: